ԱՍՏՂԻԿ
ԵՐԵՒԵԼԵԱՆ

ԹԵՐԹԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ,
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲԵԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ. ԹԻՒ 7. 1855 ՅՈՒԼԻՍ 1.

ԱՕԳՈՒՍՏՈՍ

Գ. Եղիշեանցի Սուրբ Մեսրոպ Վարդապետ Թարգմանիչ Հայոց.

ՀԱՅՐԵՆԱՍԻՐ և Սրբազան Հայրապետս անուան տարեդարձի օրը՝ ըստ ամէն տարի մեր Հայոց Սուրբ և Կաթուղիկէ Էջմիածնի փառաւորապէս կը տանէ, ինչպէս որ առ անգամ յունիս 16 հինգշաբթի օրն ալ՝ շքեղ ու երեւելի հանդիսիւ տօնախմբեց, մեր Նորահաստատ Բնկերութեան անուան տարեդարձն ալ՝ որ յիւրմոյ բազմերախտաւոր Հայրապետս անուամբը հաստատեալ և Նորին ազգասիրական տրթռուն հսկողութեան և հովանաւորութեանը յանձնուած է, մեր Բնկերութեան ամէն դամենելը միաբան հաւաքեալ՝ նոյն օրը մեղի և բոլոր ազգայնոց համար ուրախալի ու երեւելի օր, անմոռաց յիշատակաց արժանի օր մը պահելով անհրաժեշտ պարտք համարեցինք մեզի, որ հայրենասէր Հայրապետս վերոյիշեալ հոս ունեցած համառօտակի խօսքնիր՝ Արիւլի Ազգայնոց հետաքրքրական սեղանուութիւն մը տալու համար։

Աբշարունեանց թագաւորութեան առեն Հայաստան աշխարհ թէոդէսաւ Աբշարունի՝ քաջ թագաւորնեբուն

մեծագործ և սքանչելի քաջութիւն-
ներովը, յաղթութիւն, խաղաղու-
թիւն ունեցաւ, բայց Արշակ Գ-ին
մեռնելէն եաւ Հայաստանին ան կողմը՝ որ Յունաց տակն էր, շատ նեղու-
թիւններով կը ծփար։ Վերջը Խոսրով
Գ. Կայսերմէ խնդրելով, ընդոր Հայաս-
տանի վրայ թագաւոր եղաւ։ Սակայն
Հոպուրակէս Կաթուղիկոսին մահ-
ուանէն եաւ երբոր մեծին Ներսէսի
տղան Սահակ Պարթեւը Կաթուղիկոս
նստեցուցին, մէկ քանի նախարարնե-
րուն թագաւորին հետ ունեցած թշնամութիւնովին ամբաստանեցին
Պարսից՝ Խոսրովու առանց հրամանի
կաթուղիկոս դնելը։ Այսր համար
Շապուհ ալ Խոսրով դուռը կանչեց և
երբոր ան չգնաց, Արտաշիր իր հօր-
մէն բաղմաթիւ զօրք առած Հայաս-
տանի վրայ գիմեց որ Խոսրով յու-
սահատելով ելաւ գնաց և ան ալ մե-
կէն զինքը շղթայի զարկաւ, և տեղը
Վռամշապուհ եղբայրը նստեցուց։

Կը ցաւէր ասոնց վրայ Սահակայ
ազգասէր սիրտը, կ'այրէր կը մրկեր
շարունակ ու աչքը բաց Հայաստան
աշխարհին խաղաղութեան ժամանե-
լուն կ'ըսպասէր. կը տենչայր Սահակ
խաղաղասէր և ուսումնասէր թագա-
ւորի մը և խաղաղ ու երջանիկ դարի
մը. մէկ խօսքով կը բաղձայր որ իր
Հայրենեաց երկիրը, անուշիկ Հայաս-
տանը խաղաղութեամբ և ուսմամբ
զարդարուի, ու իր սիրելի ազգին
մանկունքը իմաստուն ըլլան որով ամ-
բողջ ազգը լուսաւորվի։

Նախախնամութիւնը՝ որ ամէն
ժամանակ ասանկ հայրենասէր ու ա-
ռաքինի անձինքներու ձեռնտու կրե-
լայ, լցուց Հայրապետիս եռանդոտ
փափաքը. եկաւ հասաւ այն գեղեցիկ
ժամանակը, որուն 'ի վաղուց կը փա-
փաքէր Սահակ Պարթեւ. նստաւ
Աբբայական գահը ուսումնասէր և
խաղաղասէրն Վռամշապուհ. տեսաւ
զանի երանելին Ս. Սահակ. տեսաւ
ու ճանչցաւ զանի, որ ան ալ իրեն
պէս իմաստութեան բարեկամ էր, ի-
րեն պէս ուսմունքը սիրող ու յար-
գող էր, իրեն պէս անմոռաց հայրե-
նիքն ու ազգը սիրող ու անոր անուշիկ
արեւուն մեռնելու փափաքող էր, ու
մէկ խօսքով իրեն պէս Հայաստանի
զաւակներուն պաշտպան, անոնց լու-
սաւորվելուն տենչացող, անոնց ու-
րիշ ամէն ազգաց առջեւ նախանձելի
ու գովելի ըլլալուն ցանկացող էր, սի-
րեց, ողջունեց ու համբուրեց, և
այնուհետեւ միատեղ սկսաւ Հայաս-
տանի թաւամեալ փառքերը կենդա-
նացընել, ու անմոռաց Հայաստանը
բոլոր ազգաց աչքին մէկ հատիկ երևե-
ցընել։

Աստուծոյ սքանչելահրաշ զօրութիւնս
ամ միջոցիս Մեսրոպայ ազդելով, մեր
Հայոց անղուգական գրերը գտաւ,
Արիստոսի 406 թուականին։

Կրանելի ու բազմարդիւն Հայրա-
պետիս ալ Աղիս վրայ ցրցուցած
տարօրինակ խնամքն ու սերը չափա-
զանց էր։

Սահակ և Մեսրոպ Սրբազան Հայ-
րապետները մէկ հոգի ու մէկ սիրտ
եղած, սկսան Հայաստանի ամէն դին
պրպտիլ, հին ու աւերակ դարձած
եկեղեցիները նորոգել, մեր սուրբ
և անխոտոր հաւատքին ու աւելի հոգ-
տանիլ, ազգային դպրոցներ և ճեմա-
րաններ հաստատեցին, տղաքներ հա-
ւաքելով կրթեցին, ու անոնց ուս-
մանն թերութիւնն ալ Կոստանդնու-
պօլսոյ, Աղեքսանդրիոյ և ուրիշ ու-
սումնական քաղաքներու հռչակաւոր
համալսարաններու միջոցաւ լցու-
ցին, որ կատարեալ ուսումնական ըլ-
լան և կարող ըլլան այնուհետեւ զու-
րիշներն ալ կրթել։

Մէկ կողմանէ ալ իրենք օտար լե-
զուներէ գրքեր թարգմանեցին, ա-
նանկ որ քիչ ատենի մէջ Հայաստանի
մեծամեծ հին ու նորաշէն թանգա-
րանները բազմաթիւ գրքերու կցտով

Ի ՍԳԱԼԻ ՓՈԽՈՒՄՆ

ՄԵԾԱՀԱՆՃԱՐ ԵՒ ԲԱՑՄԵՐԱԽՏ

ՖԻՕԻԳԱՅ ՊՕՂՈՍ

ՊԱՏՈՒԵԼԻՈՅ

ՏՐՏՄԱԼԻՑ ու մթագին էր այն վայրկեանը, որ անողորմ ու ապառուամ մահը իւր ահարկու և ոսկրասուր մկրատը ձեռքն առած՝ արագ ոտքով այս Պատուաւոր և Բազմահմուտ Ծերունոյն գծուծ խըշտիկին քով հասնելով, կտրեց ու երկուք բաժնեց անոր քաղցր ու անգին կենաց ոսկեղենիկ թելը, զոր Ամուսած իւր սքանչելարուեստ ձեռքը գոյաւորած ու երկրիս վրայ աղդերնուս պարգեւ էր ըրած։ Արդարև դառն ու խորին սգոյ և վշտաց մէջ թաղեց ան ամէն գորովագութ սրտերը՝ որոնք մերինին նման աս Ընդուգական Ընձին զարմանալի տաղանդն ու սքանչելի հանճարը սիրած, անկէ արտադրուած ամէնայն ոսկեղենիկ գիւտերը ու իմաստալից վարդապետութիւնները լսած, հաւնած և մեծաձայն գոված, երբոր յանկարծակի անոր պան-

գիւնքներովը մեկտեղ . . . : Ձէ՛, չէ՛, չմեռաւ անիկա . անմահ է ՓԻԶԻԳԱՆ , անմահ են ան ամէն մարդիկները՝ որոնք աշխարհիս վրայ առաքինութեամբ զարդարուած , իմաստութեան համար նեղուած և ապրելն համար հոգնած ու աշխատած են :

Մահուան օրենքը ընդհանուր է ամէնուն վրայ բայց արդարոց մահը , մահ չէ ; այլ անմահութիւն է . ինչ մեռան արդեօք , այնքան Սուրբ և Հայրենասէր Հայրապետները , մեռան Գրիգորները . Ներսեհները , Սահակները և Մեսրոպները . . . . . :

Իրաւցընէ շատ բաղդաւոր համարված կ'ըլլայինք , թէ որ աս պատուական Օ՝երուանդաս կեանքը գտնէ մէկ քանի տարի ալ աւելի շնորհուելու ըլլար մեզի և անոնց համար՝ որոնք առաւել համակրութիւն գութ ունէին անոր վրայ և անոր սքանչելի գիտութենէն քաղելու սրտանց ալ փափաքող էին :

Բայց ո՞վ, աղէտալի դժբաղդութեան . . . որ նախախնամութեան հրամանը այսպէս էր , որ այս երանելի ծերունին աշխահէ գայ , հոգնի , նեղվի և վերջապէս անարգութեամբ ձգէ աս ունայն աշխարհը թռչի երթայ Այրարատ Սրբոց կաճառը ուր յաւիտեանս երջանկութեամբ անցընէ :

Հանգուցեալ ծերունի ՓԻԶԻԳԱՅ ՊՕՂՈՍ պատուելին . յունիս 12 շաբաթ օրը ժամը 10 ին ատենները առ Աստուած փոխվելով , անոր յուղարկաւորութեան հանդէսը փառաւորապէս կատարելու համար Կիւրակի առաւօտ կանուխիկ իւր խուցէն Գումգարուի Ս. Աստուածածնայ Եկեղեցին բերվեցաւ , ուր շատ մը եկեղեցականներու և երևելի անձանց ներկայութեամբը հանդէսը կատարվելէն ետև՝ որն որ մենք ալ ներկայ էինք , որուն համար՝ Ամենապատիւ Սրբազան Պատրիարգն ալ Պալաթիոյ Եկեղեցին ըլլալով , նոյն օրը յատկապէս մեկը խրկեր էր պատուիրելով որ հանգուցեալին մարմնոյն թաղման արարողութիւնը շքեղապէս կատարեն ինչպէս որ նոյնը 'ի գործ դրվեցաւ Արժանայարգ եկեղեցականներէն , որոնց ամէնէն ալ մեծ շնորհակալութիւն ունինք , Հանգուցեալին մարմինը Սամաթիոյ Սուրբ Գէորգ Եկեղեցին ալ տարվելով , փառաւոր և շքեղ հանդէս մ'ալ հոն կատարվեցաւ նոյն տեղի Մեծապատիւ և Ազգասէր Հոգաբարձու Ազայից կողմանէ 'ի պատիւ Բաղմերախտ Օ՝երուանդաս , որն որ ճշմարիտը խօսելով մեծապէս շնորհակալութեան պարտաւորութիւններս կը յայտնեմք յիշեալ Յարգելիներուն որ իրենց պարտքը լաւ ճանչնալով , սիրով կատարեցին մեծ հանդէս ընելով ան պատուոյ արժանի Անձին յուղարկաւորութեանը համար :

Հանգուցեալ Բաղմերախտ Օ՝երուանդաս վրայօք որքան գովեստ խօսինք , այնքան քիչ է . հիմակուհիմայ այսչափս կարճառօտ տեղեկութիւն մը տալով , ընդարձակը իրեն վարքին մէջ կը գրենք , որն որ դիտաւորութիւն ունինք պատեհութիւն գտած ատեններս հրատարակելու :

բորը օգնելու համար քանի մը ձեռի մէջ գտնուեցաւ։ Եւ եղբայրը, որ զորաց Տրիբոն էր, Թրակիայի Եւ-նոս ըսուած ծովեզերեայ քաղաքին մէջ Ասիա դառնալու համար եկած առեանը հիւանդ մնացեր էր։

Կատոն այս լսելով երկու բարեկամ և երեք գերի հետ առած, Թեսաղոնիկէի ծոցէն, մեծ նաւ չգտնելով, բեռ կրող փոքրիկ նաւ մը հեծաւ, և առանց փրկութեան յոյս ունենալու կատաղի մրրկի մը բռնելով ալիքներուն մէջ ընկղմելով և ելլելով հասաւ Եւենոս քաղաքը. բայց ինչ օգուտ, հոն իւր եղբայրը մեռած գտաւ։ Շատ վշտացաւ սկսաւ արտասուել և կսկիծով լալ և կոծվիլ։ Վասն զի Կատոն որչափ որ խիստ և անամոքելի էր հեշտութեանց, սպառնալեաց և անիրաւ խնդիրներու դէմ, այնչափ ալ գորովասիրտ և գթացող էր իւր աղգականներուն վրայ։ Մեծ պատրաստութեամբ թաղման հանդէս մը ըրաւ իւր եղբօրը, և իւր ծախիւքը հազուադիւտ և մեծագին կիճերէ շինուած փառաւոր շիրիմ մը կանգնեց Եւենոսի հրապարակին մէջ։ Այս հանդեսէն ետքը երբոր նորէն նաւ հեծնելու և դառնալու կը պատրաստուէր, բարեկամները ըսին իրեն որ մեռեալին մարմինը իւր նաւին մէջ չառնէ, այլ ուրիշ նաւի մը մէջ դնէ, գուցէ բարի գուշակութիւն չսեպելով։ Կատոն պատասխանեց անոնց, ես կեանքս կ'զատուիմ, և եղբօրմէս չեմ հեռանար։ Եւ այս ըսելով հրաման ըրաւ որ նաւերուն խարիսխները առնեն և ճամբայ ելլեն։

Անեպացւոց երկրին մէջ Բուսոյի թագաւորը, երեք աղայ ունէր որ շատ կը սիրէր, բայց մասնաւոր սէր ունէր փոքրագոյն տղայն վրայ։ Ուստի մեռնելէն քանի մը օր առաջ իւր աթոռոյն յաջորդ ցուցուց զանիկա։ Այս վարմունքը՝ ինչպէս որ թագաւորութեան օրինաց հակառակ էր, այնպէս ալ արտաքոյ կարգի երեւցաւ ամենուն։ Յաղթողը առանց մեղք մը համարելու ուզեց որ մեռեալ թագաւորին այս ընտրութիւնը չնչէ, և անդրանիկը թագաւորցնէ. բայց նոյն ինքն մեծ որդին դէմ կեցաւ առանց խորհուրդին և թագաւորութեան պատկը ինքն իւր ձեռքը դրաւ իւր կրտսեր եղբօր գլուխը։

Եւ մինչեւ թագաւորին Աբսլինէ մայրը որ ուրիշ երեք զաւակ ալ ունէր, ամենէն երանելի կինը կ'սեպէր զինքը իւր որդւոյ միաբանութիւնը տեսնելով. փառք կուտար Աստուծոյ ոչ թէ պարգեւած հարստութեանը և թագաւորութեանը համար, հապա իւր երեք որդւոյ իրենց թագաւոր եղբօրը վրայ ունեցած հաւատարմութեանը համար, որոնք իբրև թէ առնոր թիկնապահ զօրքն էին և անոնց մէջ կապրէր առանց վախ մը ունենալու սոսկալի թշնամեայ ոչ սուրէն և ոչ նիզակէն։

Եւկլիտէս փիլիսոփայն, որ Սոկրատին աշակերտն էր, մեծ համբաւ ունեցաւ բոլոր իմաստասէրներուն առջեւ իւր մեկ խօսքին համար։ Այս փիլիսոփային եղբայրը անխոհեմ և բարբարոս խօսք մը կընէ իւր եղբօրը դէմ. կ'մեռնիմ, կըսէ, թէ որ քեզի վնասս չառնեմ։ Եւ ալ թող մեռնիմ, կը պատասխանէ Եւկլիտէս, թէ որ սրամտութիւնդ քեզի ձգել չ'տամ և առաջուան պէս ոչ սիրելու քեզ չը պարտաւորեմ։

Այո, սիրելի եղբարք, մեր եղբայրները և մեր քոյրերն են մեր առաջին բարեկամները, որ Աստուած մեզի կը պարգևէ։ Մինչդեռ ամենքս մեկ տեղ մեր հօրը տունին մէջ կ'բնակինք, մի և նոյն հացէն կուտենք և վրանիս մեր ծնողքը քանի որ մի և նոյն դուռը և խնամքը ունին, պէտք է որ ջա-

նամք և ուժովցընեմք այս բարեկամութեան կապը որ մեր կենաց երջանկութիւնն է։

Ի Փարիզ.
1855. մայիս 8/20.

Պաղտիկ Յ. Նորատունկեան։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Կորսուած տղայ[1]։

Հիմա դառնանք մեր պատմութեանը։

Շատ տարիներ անցաւ առանց մէկ փոփոխութեան մը, և խեղճ կնկան երկրային ամենամեծ մխիթարութիւնը իւր անհայր Գարօլին աղջիկն էր, ուրկէ ժամ մը անգամ չէր կրնար բաժնուիլ, և անոր կրթութիւնը ինք կը սորվեցներ։

Այս պղտի որբ աղջիկը խելացի ու հաճեստ ըլլալուն իւր մօրկանը սիրելի ընկերութեանը մէջ երջանիկ՝ չէր ուզեր ուրիշ ընկերներու հետ կենցաղավարիլ։ Իւր կորսուած հօրը ու եղբօրը վրայօք կը խորհրդածէր, ասանկ մեկէն 'ի մէկ անակնկալ կերպով թէ իրենց հայրենիքէն և թէ իրենց կեանքէն զրկուելնուն համար։

Այս բանս ժամանակ ժամանակ խորին խորհրդածութեան մէջ ձգելով զանի, իւր մատաղ ճակատին վրայ դաւրն տրտմութեան ամպ մը կը ծածկէր, բայց իւր սիրելի մայրը միտքը բերելով քաջալերութիւն կ'առնէր, գիտնալով որ ինքն էր միայն անոր արտմութեանց ողբիչը, ու կենաց դառնութեանը ամանին մէջ մեղրի կաթիլ մը։

Բայց անգութ բաղդը ասոնցմով ալ չի կշտացած, ուրիշ ցաւալի դժբաղդութիւններ բերաւ այս խեղճ որբերուն։

[1] Տես թիւ 6 երես 95։

Երբոր Գարօլին տասներկու տարեկան էր, Պ. Սիդոնի նախկին բաժնորդը յանկարծ մեռաւ, և այն ատեն յայտնի եղաւ որ ասոնց վաճառականութիւնը, զբնոր ամէն մարդ հարուստ ու ծաղկած կը կարծէր, շատ ծանրը կորուսանեերու ու գործաւորներուն անիրաւութեանը համար կործանման վիճակի մը մէջ է. անանկ որ խեղճ կնկան պարտատէրները իւր տունը ու մէջի եղածները ամէնը ձեռքէն առին. նաև այն պղտիկ արտնալ որնոր Պ. Սիդոնի զբօսանքներ։

Յամանակ մը, մինչեւ որ կալուածոց գործքերը կարգի դրուեցան, ամէն ամիս խեղճ տիկնին մէյմէկ քիչ բան կուտային, իրեն ու աղջկանը պիտոյիցը համար։

Բոլոր գործքերը կարգի դրուելէն ետքը գրեթէ անոնք զուրկ ու անիրնամ մնացին ամէն բանէ, և ժամանակաւ Պ. Սիդոնի հետ բարեկամ եղողները բոլորովին իւր կինը մոռցան ու երեսէ ձգեցին։

Իսկ հիմա այս կնկան մտքին ազնիւ զօրութիւնը ու Աստուածաշունչէն սորված սկզբմունքներուն ազնուութիւնը կրկին ցուցուցեցաւ. և նոյն սկզբմանց՝ բոլոր իւր կրթութեամբը ու օրինակին ներգործութիւններովը՝ երջանկաբար կրթած էր իւր աղջիկը։

Յամանակ վատնելու ու պարապ տեղը ողբ վիշտ ու ցաւ զգալուն ու գանգատներ ընելուն տեղը ինքզինքը զուարթ կը բռնէր, կը քաջալերէր իւր աղջիկը, Աստուծոյ բարերարութեանցը ու իմաստուն նախախնամութեանցը վրայօք խորհելով ու խօսելով, որն որ երբ իւր տղաքները նեղութեամբ, վիշտերով, ու փորձութիւններով կը խրատէ, ոչ թէ իւր հաճութեանը համար կրնէ, այլ անոնց օգտին համար. և անոնցմէ մէկը չի թողուր իրենց չկրցած փորձութեանը մէջ ձգելու։

Տիկինը խորհելէն ու խօսելէն զատ ուրիշ բաներ ալ կ'ընէր, պէտք էր որ իւր պիտոյիցը համար միջոցներ գտնար, վասն զի իրեն օգնելու կարող ազգականներ չունէր, և յոյսը ամէն բանէ կտրելով մէկէն իւր բնակած տեղին մօտ բնակութիւն մը վարձու բռնեց և օրական դպրոց մը բացաւ երիտասարդ աղջկանց և ասոր շատ յարմար կուգար թէ կրթութեամբ և թէ բնաւորութեամբ. և ինքը շուտով մէկ քանի պզտի աղջկանց վրայ սէր ձգեց, որոնք իւր խնամոցը տակնէին, որոնց մէ շատերը սորվելնէն եաև իրենց բարերար ուսուցչէն սորվածնին երախտագիտութեամբ ու սիրով կը յիշէին։

Այսպէս շատ տարիներ անցաւ առանց մէկ փոփոխութեան մը. միայն թէ խեղճ որբ Դարօլինը, որ հիմայ տասն և ութը տարեկան էր, կ'ջանար իւր մօրկանը օգնելու, մօտը մէկ քանի աղջկանց երաժշտութիւն ու գծագրութիւն դաս տալով. որոնք իւր մօրը դպրոցը չէին գար։

Բայց կրցածնուն չափ կաշխատէին, ու կրցածնուն չափ սակաւապետութեամբ կ'ապրէին. Դարօլինն ալ ու մայրն ալ մէկ պարզ կերակուրով մը ու աղքատիկ հագուստով մը կը բաւականանային. իրենց աշակերտներուն մէջէն ոմանք այնչափ անխորհուրդ էին, որոնք իրենց բարերար ուսուցչին հագուստը կը ծաղրէին. չէին գիտեր թէ այն պարզ հագուստը անգամ ձեռք ձգելու համար որչափ դժուարութիւններ են քաշեր. և տակաւին շատ քիչ գիտէին կամ կերևակայէին թէ իրենց ուսուցիչները ժամանակաւ հարստութեան ընծայած ամէն մէկ վայելչութեանց և շռայլութեանց մասնակից էին։ Հիմա զուարթ եղիր սիրելի ընթերցող, ես կենաց ուրիշ մէկ փոփոխութեանը կուգամ կոր, և ան ալ լաւագոյն մէկ փոփոխութիւն մը, և թէոր իմ պատմութիւնս այս կերպով մինչև հիմա շատ տխուր է եղած, սակայն կընամ խոստանալ որ ինչպէս որ մինչև հիմա ամպեր ունեցանք, հիմա ալ արեգական լոյսեր պիտի ընդունինք. ըսեմ ձեզի այս իմ պատմութիւնս կենաց մէկ ճշդիւ նկարագրութիւն է։

Ինչ է այս անցած մեծ տեսարանը,
Ապրիլի մէկ մութ ու տրխուր օր մը,
Գըզտի արեւ մը, պըզտի անձրեւ մը,
Սողալով գիշերն այն ժամանակը,
Կը թողուցինք ամէն բաները։

Իրիկուն մը երբոր Դարօլինը իւր աշակերտներէն տուն կը դառնար կոր, չափահաս աղնուական մը հանդիպեցաւ իրեն, զոր նոր միտքը կուգար թէ քանիմը անգամ տեսած էր գրեթէ նոյն տեղը և իրեն երևցեր էր թէ նոյն անձը հետաքրքրութեամբ մը իւր վրայ կը նայէր, որուն պատճառը չէր գիտէր, և շիտակն ալ կուզէս նէ, ինքը այս բանիս չէր հաւնած։ Աղնուականը մօտեցաւ ու մեղմ ձայնով մը հարցուց թէ, «շիտակ եմ զձեզ Սիդօնի օրիորդը կարծելուս։» Այո՛ որոշակի ես եմ» պատասխանեց Դարօլին։

«Լաւ ալ ատանկ կարծեցի» ըսաւ անծանօթ աղնուականը նոյն քաղցր ձայնովը, «սխալ չեմ, հրաման ունիք, սիրելի օրիորդ, ձեզի հետ տուն գալու։

«Տէր իմ» ըսաւ Դարօլինը, «ես զձեզ չեմ ճանչնար որն որ բացարձակ մերժում մ'էր, բայց աղնուականը դիտմամբ այս միտքին չի գնաց։

«Շիտակ ես» պատասխանեց, «դուն հիմա զիս չես գիտեր, բայց կը յուսամ որ շուտով զիս պիտի ճանչնաս» սիրելի օրիորդ՝ ես քու հայրդ կը ճանչնայի, և ես անոր սերտ բարեկամն էի. հիմա զիս հետդ կը առնիս մի, չեմ տանիր», «չէ» ըսաւ Դարօլին վասն զի խոհեմ խորհուրդ մը ունեցաւ, և ինչ և իցէ աղնուականէն շընորհակալ եղաւ իւր սիրելի հօրը բարի յիշատակութեանցը համար, և կանցնէր կերթար։

„Գոնէ արտոնութիւն ունիմ ձեր էտուէն գալու „ ըսաւ աղնուականը, ես այդ բանը կուզեմ նէ. բանաւոր պատճառ մը ունիմ, ես քու մայրդ տեսնամ պիտի և առանց քու օգնութեանդ գուցէ ամիս մը չանցած կը գտնամ զանի, թէ և իմ զանի գտնելս խոտի դէզի մը մէջ ասեղ մը փնտռելուն կը նմանի. բայց ինչ և իցէ զանի գտնելէն ետ չի պիտի կենամ. ես շաբաթ մընէ հոս եմ քեզ ու քու մայրդ գտնալու համար, նաև Յօրքշայրէն մինչև հոս բոլոր ճամբան եկայ ձեզի համար, և հիմա ձեզնէ մէկը գըտայ. գիտցած ըլլաս որ քեզ փախցնելու ըլլամնէ, անուանս Սամուէլ Յէդօն չըլլայ։ Գարօլին աղնուականէն թոզնութիւն խնդրելով, թէ ը մոտաւ ու մէկ փողոցէն մեկալը քալելով տուն հասան։ „Դուն զիս չե՞ս ճանչնար „ ըսաւ աղնուականը պզտի սենեակը մըտածին պէս, բայց ինչպէս կըսնաք ըսաւ, զիս երբէք տեսած չէք։

„Այս քու սիրելի երկանդ մէկ հին բարեկամն եմ. մենք մէկտեղ դպրոց գացած, և մէկտեղ ճամբորդած ենք, գործի մէջ զբաղելնէս առաջ ես Յօրքշայրի մէջ և ան պիտա առաջ Լ՝ օնառայի մէջ և իւր հօրը մեռնելէն ետև Գիէնթի մէջ..... աղէկ աղէկ, հիմա ասանք ըսելով քեզ չի պիտի վշտացնեմ, ըսաւ աղնուականը անոր աչուքները լեցած տեսնելով. ես եղած գացած բաներուն բոլորը գիտեմ, զուարթ եղիր, սիրելի տիկին, դուք գիտէք որ մէկ ուրիշ ժառանգութիւն մը կայ առնպական, անկորուստ և անանցանելի, և ձեր ժպիտներէն կը հասկըցնամ թէ միտքս աղէկ կը հասկընաք կոր։

Աղէկ, մենք երկուքնիս ամուսնացանք, յետոյ ալ մենք իրար չի տեսանք, մինչև տասն և չորս կամ տասն և հինգ տարի առաջ օր մը լսեցի իմ հին Սիդօն բարեկամիս ցաւալի վախճանը, թէ և անոր ցաւալի չէր, ինչու որ ինքը պատրաստուած էր այն բանին։ Չեմ կրընար քեզի պատմել թէ որչափ վշտացուց զիս, բայց ես այն ժամանակը իրաւունք չունէի իմ ցաւս կամ համակրութիւնս քուկինիդ հետ խառնել, որ օտարական մը նեմ, բայց շատ ուրախ էի, ինչպէս որ կը կարծուէր, աղէկ պարագայներու մէջ ըլլալդ լսելով։

Շարունակութիւն պիտի ըլլայ։

Արբեցութենէ ետ կենաչու յարմար միջոց մը։

Երիտասարդին մէկը՝ որ պատերազմի գացած էր, իւր պայմանաժամը լրանալով՝ դարձաւ հայրենիքը ծնողաց հետ մէկտեղ բնակելու։ Այս երիտասարդը ճախարակագործ էր, և իւր ճամբորդութեանը մէջ ուրիշ գործաւորներուն նոյն արհեստին վերայ բանեցուցած եղանակները տեսած ըլլալով՝ դիւրաւ կրցաւ յաջողել. այնպէս որ՝ քանիմը ամիս վրան աշխատելէն ետքը՝ շատ գործ ունեցաւ բանելու և ասանկով բաւական ստակի տէր եղաւ։ Ինքը շատ երջանիկ պիտի ըլլար, թէ որ արբեցութեան չար սխտին գերի եղած չըլլար։ Ամէն օր մէկ մէկ շիշ օղի կը խմէր, որ շատ վնասակար ըլլալով՝ վատառողջ ըրաւ զինքը։ Օր մը բժիշկին խորհուրդ հարցուց այս բանին վերայօք. բժիշկը ըսաւ որ, եթէ տակաւին արբեցութիւնը շարունակէ վերջը գէշ պիտի ըլլայ և մահն ալ շուտով պիտի վրայ հասնի։ Բայց երիտասարդը օղին երբէք չի կրնալ զանց առնելու պատրուակաւ, բժիշկին տուած խորհուրդին չի հետեւցաւ. և իւր արբեցութիւնը շարունակեց։ „Արդեօք չես կրընար արբեցութենէդ ետ կենալ, ըսաւ օր մը բժիշկը, արդ ուրիշ միջոց մը փորձենք. քանի՞ սա տուփը՝ որուն մէջ գայլախաղներ

կան, որոնք օղիին զօրութիւնը կը նուազեն և զանի անվնաս կ'ընեն. շի-
չի մը տեղ պղտիկ կուժ մը առ, և ամէն օր այս քարերէն մէկ մէկ հատ
մէջը նետէ օղի լեցընելով. բայց նախ պրղտիկ գայլախաղները նետէ, որ իւր
զօրութիւնը աւելի կանուխ ազդէ։»

Երիտասարդը այս միջոցիս վրայ զարմացած՝ ամէն օր իւր կուժին մէջ
մէկ մէկ քար կը նետէր և այսպէս իւր օղին կը խմէր։ Բայց կամաց կամաց կու-
ժը գայլախաղներով լեցված, ալ մէ-
ջը օղի չէր առներ։ Երիտասարդը այս-
պէս արբեցութեան սովորութիւնը
կորնցուց, առողջութիւնը գտաւ, և
յանցանքը ճանչնալով ըսաւ. «Հիմայ
կը տեսնեմ որ մարդս կը սխալի կար-
ծելով թէ իւր մարմնեներուն չի
կրնար յաղթել. ես իմ օղիս կապվեր
էի, վասն զի զանց առնելու փորձ ը-
րած չէի. հաստատուն կամքը մարդս
իւր պակասութիւնները կրնայ շտկել
որովհետև մարդուս անձին վրայ ամէն
բան սովորութիւն կրնայ ըլլալ, բայց
իրմէ միայն կախում ունի ուղիղ գա-
տողութեամբ զանոնք յաղթել»։

Արդարև երիտասարդ գործաւորը
իրաւունք ունէր. անշուշտ շատ դը-
ժուար կուգայ մարդուս իր կրքերը
զսպելը, բայց կրից վրայ պէտք եղած
իշխանութիւնը հաստատելը, անոնց
ցնդին տակը վատութիւն ընկճելին աւելի
դիւրին է. առաջին քայլը միայն դժ-
ուար է, սկսիլը արդէն կէս ընել է։

Զարմանաչի ամուսնութիւն մը։

Բրուսիայի Ֆրէտերիկոս թագա-
ւորը՝ օրմը Պրէնտէպուրկէն անցնելով
վեց ոտք բարձրութեամբ երիտա-
սարդ կին մը տեսնալով, իր առջին
բերել տուաւ անիկա. տեսաւ որ
խեղճ կոշկակարի մը աղջիկ էր. իս-
կոյն նամակ մը գրեց Պէռլինի Թը-
դանօթաձիգ զօրաց հաղարապետին,
հրամայելով որ գրաբերը ամուսնացնէ՝
իր խումբին ամէնէն բարձրահասակ
մարդու մը հետ. և կնիկէն խնդրեց որ
աս նամակը Պէռլին տանի առանց ան-
որ մէջի գրուածին վրայօք բան մը ըսե-
լու։ Աղջիկը չգիտնալով որ նամակը
տուողը թագաւորն էր, և Պէռլին եր-
թալու փափաք չունենալով, ան ժա-
մանակը մէկ ծեր կնկան մը տուաւ,
որն որ Պէռլին կերթար, խստիւ պատ-
ուիրելով յանձնեց անոր, մէկու մը
չտալ բաց 'ի այն հաղարապետէն, որ-
ուն որ նամակը ուղղուած էր։ Ծեր
կինը հաւատարմութեամբ կատարեց
իւր յանձնարարութիւնը. հաղարա-
պետը նամակին իմաստը կարդալով,
գրաբերին երեսը նայելով՝ շատ զար-
մացաւ։

Վերոյ այսր ամենայնի թագա-
ւորին հրամանները վճռական էին,
և ինքը ստիպեալ էր անոնց գործադ-
րութիւնը տեսնելու. գործը գաղտ-
նի մնաց մինչեւ թագաւորին վերա-
դարձին։ Որատեն թագաւորը փափա-
քեցաւ տեսնալու այն նոր ամուս-
նացեալները՝ հարսը տեսնելուն պէս
շատ զարմացաւ, թէ ինչպէս համար-
ձակեր է ասանկ խաբեբայութիւն մը
բանեցունել. խեղճ կինը պատասխա-
նեց թէ ամենևին խաբեբայ խաղ մը
խաղացած չեմ, ու կինը վստահ էր
երկանը իրեն համար գանգատ մը ջ-
նելուն, միանգամայն նորին վեհափա-
ռութեանը աղաչելով, որ բարեհաճի
իր մեծ շնորհակալութիւնները ընդունե-
լու ասանկ բարի ամուսնութիւն մը
ձեռք ձգելուն համար։

Արարչագործութիւն։

Ստուածային գործոց և կարգադ-
րութեան յառաջընթացութեան ժա-
մանակ՝ հասաւ ան կէտը, որուն մէջ
երկիրս պիտի գոյանար։ Երբոր յաւի-
տենականութենէ նախասահմանված

ան նշանաւոր վայրկեանը եկեր էր, Աստուածուիր եղաւ իր զօրութեամբը ու մէկ խօսքով ստեղծեց զաշխարհը։ — Ի՞նչ երեւելի ու նշանաւոր վայրկեան մ՚էր, որ առ զօրաւոր դուռնոր աներեւոյթին խոկոյն երեւան եղաւ, որուն վրայ հիմակ այսչափ միլիոնաւոր արարածներ կը բնակին։ — Նախապատրաստական միջոցներ պէտք չէին ասոր համար։ «Ընիկա ըսաւ ու եղաւ. անիկա հրամայեց ու հաստատվեցան։ Երկիրը նախ և առաջ անձեւ ու անպատրաստ էր, և խաւարը անդունդներուն վրայ կը շրջէր»։ Ամենակարող Տէրը անդունդը դիտեց. և բնութեան զանազան բաժանմունքը սահմաններ դրաւ։ «Ըսաւ անիկա. թող լոյս ըլլայ. և եղաւ լոյս»։ Այնուհետեւ ծովն ու ցամաքը երեւցաւ. լեռները վեր ելան և գետերը վազեցին։ Արեգակն ու լուսինը երկնից մէջ սկսան իրենց ընթացքը ընել։ Կանաչներն ու տուն-կերը գետինը զարդարեցին։ Օդը, հողը ու ջրերը իրենց վերբերական բնակիչներովը լեցվեցան։

Վերջապէս մարդս նման պատկերին Աստուծոյ ստեղծվեցաւ. ուղղահայեաց դէմքով պատելը երեւցաւ. և իր Ստեղծողին օրհնութիւնը ընդունեց, իբր աս նոր աշխարհին Տէրը։ Ամենաղօրաւոր Տէրը տեսաւ իր գործքերը երբոր որ լմնցաւ, բարի կոչեց զանոնք։ Գերագոյն էակները զարմանքով 'ի գոյ ածման աս նոր յաւելումը տեսան։ «Առտուան աստղերը միտեղ երգեցին, և Աստուծոյ բոլոր որդիները ուրախութեան ձայն հանեցին։

Պէյտ։

Երկիր։

Յանապարգիր 'ի յերկրի,
Աբք կանանի և մանկունք,
Ընդ կենդանեաց դեղանի,
Բնակին չքնաղ և թրուշունք։
Բարձրաւանդակ են լերինք,
Լայնատարած 'ի յերկիր,
Գոգ համբարձեալ տարածիդ,
Ու խառնեալ դ'երկին լուսալիր։
Կանանչազդեստ են բլուրք,
Արգաստաւոր և պտղիք,
Եւ 'ի յերկրի գեղաշուք,
Անթիւ են ձորք խաղաղիկ։
Բազմագին են 'ի յերկրի,
Գիւղք և քաղաքք հոյակապ,
Բիւր անդ 'ի վեր նշմարի,
Բիւր ասա 'ի վայր գայ 'ի յայտ։
Եւ բնակիչքն սրբարշաւ,
Մերթ 'ի նրժոյգս մերթ 'ի կառս,
Թռանին երագ կամ սակաւ,
Յայս կոյս և յայն 'պողոտաս։
Եւ մինչ ողջոյն զարմք մարդկանց,
Տըղայք, աղջկուանք կարմրորակ,
Ի հոգս 'ի խաղաս իւրեանց,
Պարապին ցանկ այսանակ,
Փիղք վիթխարիք և մլկունք,
Եղնիք, գառնիք ձիւնափայլ,
Շունք, երիվարք և կատուք,
Ընկեր 'ոգընկեր գան 'ի պար։
Ճանճիկք 'ի յօդս լուսավառ,
Ճրճիկք 'ի հողս պարարուն,
Սողունք 'ի տունկս յողջոյն վայր,
Ցանգ երեւին բազմագոյն։
Սոքա և ասա 'ի յերկրի,
Են երջանիկ կենդանի։

Ծովք։

Բայց 'ի ծովու լայնատար,
Ուր ամբառնան գոռ կոհակք,
Առագաստեալ նաւն վիթխար,
Սլանայ ընդ փոյթ զերթ սլաք։
Կամ շոգենաւն 'ի շքեղ,
Մրրկեալ դ'ալիս փրփրագեղ,
Սաւառնի շայտ խրոխտ 'ի թիւնթ,
Ցիւրն հեռաձիգ ասպարէզ։
Եւ բնակիչքն քաջարշաւ,
Լրցեալ 'ի նաւս մեծագոյն,
Պարզին 'ի թիւռ սրբարշաւ,
Ցերկրեն յերկիր և յափունս։
Բայց յամենի 'ի ծովուն,
Ո՞չ լերինք քեզ 'ի դէպ գան,
Ի՞չ քեզ քաղաքք ասն ողջոյն,
Ցանգընդախարն Ովկիան։
Անդ ո՞չ ծաղկին ծառք չքնաղք,
Եւ ո՞չ անտառք հովանի.
Զի լայնաձիգ ա՛նբընակ,
Դա ջուր մ՚է դառն ու աղի։
Ալեթ մրնիս 'ի յանդունդ,
Ահեղ ծովուն խորագին,
Գրացես զտեղին շուտափութ,
Ցորում՚ ձրկունք բընակին։
Անդ յաղթանդամ բաղենայք,
Եւ շանաձուկն ժանտային,
Օձաձրկունք խեշափառք,
Ոստնուն ասա՚անդ խընդագին։
Եւ դու գրացես 'ի ծովուն,
Ջայլ և ձրկունս բազմագոյն։

Բանաձիւք 'ի հինգ հացարաց անտի [1]։

19—Ընտահման կանոնաք վարիլ 'ի վաճառս իւր՝ ինքնուրոյն լինի սահմանաւոր կանոնաց 'ի դպրոցս բանից։

20—Յարդ պատուոյ վաճառականին հաստատուն գտանել միշտ 'ի խոստմունս իւր։

21—Հաստատուն 'ի խօսս լինիլ՝ առաւելս զհաւատարմութիւն վաճառականին քան զմեծագանձ հարստութիւն նորա։

22—Պատիւ եղանակ խաբէութեան կորուսանէ զյարդ պատուոյ վաճառականին։

23—Որ պատրէ 'ի գնելն և խաբէ 'ի վաճառելն, նա ոչ երբէք զերծանի 'ի տուգանաց բանտից։

24—Պատրանք և խաբէութիւն 'ի նենգութիւն վաճառաց յաղմուկս խռովութեան տագնապեցուցանեն զսիրտ վաճառականաց։

25—Համբաւ վաճառականին 'ի մեծաշահ օգուտս իւր, թէ մաքուր լցեն դրամք նորա 'ի գնելն, և գեղեցիկք լցեն նիւթ վաճառաց 'ի վաճառելն։

26—Վաճառականն զդաղանիս վաճառին մի՛ յայտնեսցէ ումեք, նաեւ կնոջ իւրոյ։

27—Մի՛ յառաւելութիւն պատուոյն կեղծիցէ զշահս վաճառաց 'ի խաբէութիւն այլոց 'ի կատարեալս երդիծական դսրուվանաց անձին իւրոյ 'ի համբաւ օտարաց։

28—Ի զբօսանս վաճառականաց 'ի պարապութեան նոցա, բաւական համարեսցի մատեան աշխարհագրութեան տեղեկութեամբ բնաւորութեան բնակչաց և արտադրութեան երկրին։

29—Հմտութիւն լիավարժ յանսխալ կանոնս վաճառականութեան է ծանօթութիւն սխալանաց այլոց 'ի վրիպակաց անխորհուրդ գործողութեանց նոցին։

30—Ի պանդխտացեալ օտարականաց տեղեկութիւն ինչ զքաղաքն նոցա և զասխրութեան քաղաքացոյցն նիւթ իմաստից է 'ի կատարեալ հմտութիւն վաճառականին։

31—Վաճառականն թէ ապահիցէ ընդ շահս խաղաց, կորուսանէ զվաճառականութիւն իւր։

32—Գինեմոլութիւն թոյն մահաբերի է վաճառականութեան։

33—Վաճառականութիւն յատակ թէ հանապազորդեսցէ ամսական քննութեամբ 'ի հաշիւս տումարաց և փոփոխութեան զարձուածոյ վաճառին, զամբողջական հմտութիւն ելից և մուտից վաճառանոցին։

34—Վաճառականութիւն խառն և շփոթ, թէ առանց ամսական քննութեան թողցէ զտումար հաշուին դարձուածոյ վաճառանոցին։

35—Օրագրելիս 'ի քննութիւն իւր զշահս վաճառաց և զհաշիւս ծախուց անձնական պիտոյից։

36—Ընտրելութիւն ծախուց քան զշահս վաճառաց նուազեցուցանեն զնիւթ հարստութեան վաճառանոցին։

Շարունակութիւն պիտի ըլլայ։

Հանդուցեալ Ֆիղիգայ Պողոս։

ՐՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ճերմակ մրջիւններու բոյներ։

Այս բնակարանները կաւով կը լինեն։ Անոնք ընդ հանրապէս տասն երկու ոտք բարձրութիւն ունին, և համեմատաբար լայնութիւն։

Երբոր ամէնը մէկանց տեսնուելու ըլլան ինչպէս որ շատ անգամ կ'ըլլայ, կարծես թէ Աստուծոյ գիւղմնի. երբեմն այս բնակարանները բնիկ իրաձիթներէ ալ մեծ են։

[1] Տես թիւ 6. երես 98։

Անոնց շինուելը քիչ հետաքրքրական բան չէ. երկու կամ երեք կաւով շինուած փոքրիկ աշտարակներ ոտք մը բարձրութեամբ տեղի մը վրայ գլխաշաքարի նման կը կայնեցնեն։

Քիչ ժամանակէն թէ թուով և թէ բարձրութեամբ կը շատնան, վերջապէս մինչև յատակը շատ կընդարձակեն, և կամարով մը գագաթնին իրար կը միացնեն, և զանի նոյն կաւովը շինած հատ պատովմը կը սնդեն։

Նեբքին փոքրիկ աշտարակները գագաթներէն զատ, որոնք բուրքի նման զանազան տեղուանքներէ վեր ելած են, կը վերցնեն և նորէն անոր վրայ կաւը կը գործածեն։

Մրջիւնները միայն շինուածքին ըստորին մասը կը բնակին. կամարը, որ ըն որ շատ զօրաւոր և հաստատուն է, օդին դեշութենէն և թշնամեաց յարձակմանէն պաշտպանելու համար է. և նաև մեջը տաք ըլլալու համար որ հաւկիթները և ձագերը թխսելու ժամանակ անանկ կը պահանջէ։

Կեդրոնը կերեւայ թէ արքունական սենեակ մըն է, որուն վրայ շատ գեղեցիկ կամարմն ալ շինուած է բուրի մը նման. նախ մէկ մատնաչափ երկայնութենէն աւելի չէ, բայց կամաց կամաց թագուհին քանի որ մեծնայ, եօթը մատնաչափ և կամ աւելի երկայնութեամբ կ'ընդարձակեն։

Հոս միշտ արքունական զոյգերը կը բնակին, և անոնց դռները այնչափ պզտիկ են. ուրիշ դուրս չեն կրնար ելլել։

Անոնց քովերը և բոլորտիքը եղած բոլոր սենեակները արքունական կամարաձև առանձին սենեակներն են, զանազան ձեւերով և մեծութեամբ մէջէ մէջ շինուած, և նորաձև ճամբայներով իրար կապակցած. ուր հաղարաւոր ոպասաւորներ և զինւորներ թագաւորին և թագուհիին վրայ կրսպասեն։

Անոնց քովերն են հաւկիթարանները որոնք ձագերով և հաւկիթներով լեցուն են։

Այս անկանոն սենեակները որոնց ոչ մէկը մէկ ուրիշ մատնաչափ լայնութիւն ունին, բոլորովին հասարակ կաւէ շինուած պատեանով մը պատած են. հանդերձանքներով լեցուն ուրիշ սենեակներ կամ շտեմարաններ կան այս հաւկիթարաններուն քովերը։

Շտեմարանները և հաւկիթարանները որոնք ուրիշ պզտիկ սենեակներով սրահներով զատուած են, շինքին բոլոր դուրսի կողմերնալ կան. և նաև մինչև անոր գագաթը. բայց թէ և անոնք բնակարանին դէպի ըստորին մասը շինած են և կամարին տակը բոլորովին թողուցած է։

Գագաթը տափկուկ ձեւով շինուած է, և նոյն գմբեթին տակը ուրիշմալ դարձած է ուրիշ ամենեւին ջուր չանցնիր, և թէ որ պատահմամբ ջուրը ներս անցնելու ըլլայ, տակինին վրայ կիջնայ, ու անկէց գետնի տակի շինուած ճամբայներէն դուրս կելլէ։

Անոնք երեք չորս ոտնաչափ գետնին տակէն են շինուած և անկէ ալ ճիւղեր բաժնուած որ գետնին տակէն կերթան և հեռու տեղը գետնին երեսը կելլեն։

Անոնք մրջիւններուն համար շատ հարկաւոր ճամբայներ են, որոնցմէ կաւ փայտ ջուր և իրենց պաշարը կը բերեն։ Անոնք պարուրաձև և աստիճանաւոր տեղեր ունին, ուրիշ վեր կելլեն. վասն զի այս արարածներուն դժուար կուգայ ուղղահայեաց դիրքով ելլել իջնալ։

Տեղ տեղ կես բթաչափ լայնութեամբ տափարակ ճանապարհներ շինուած են, և քիչ դարձուածք. լեռներուն քովէն կորուած ճամբայներուն նման, որոնց վրայէն դիւրաճամբորդութիւն կ'ընեն։

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

Զուարճաշի ընտանիք։

Վէրսայլի մօտ 1834ին տաւնները Նաբոլէոնին հետ մեծամեծ պատերազմներու մէջ մնած, և զանազան քաջութիւններով հռչակուած ինը զաւակով երկրորդական պաշտօնական մը կը բնակէր, որոնց ամէն մէկին ալ զանազան երկիրներու մէջ ծնած ըլլալով՝ մեկուն զրուցուածքը միւսինին չէր յարմարեր. բայց զարմանալին ան է որ մէկ հօր և մէկ մօր մը զաւակներ էին ամենքն ալ, որոնք Գաղղիացւոց Իտալիոյ վրայ ըրած առաջին արշաւանքին տաւնը ամուսնացած էին. և իրենց անդրանիկ զաւակը՝ դէռ Միլանի մէջ եղած տաւնը ծնած ըլլալուն՝ ճիշդ իր մօրը լեզուն կը խօսէր՝. երկրորդը՝ Զուիցերիացի էր, և ան ալ ան լեզուն գիտէր. երրորդը՝ Եգիպտոս ծնած ըլլալուն՝ Արի կը կոչուէր, և լեզուն ալ Արաբերէն էր. չորրորդը՝ Պոլոնիա Սիւր Մէռ ծնած էր, որ տաւն Նաբոլէոն այս քաղաքիս նաւահանգիստն Անգղիացւոց վրայ կը յարձակէր. հինգերորդ տղան՝ Գերմանիոյ մէջ ծնած էր, և լեզուն ալ նոյն լեզուն էր. վեցերորդը՝ Նաբոլեցի էր, և ան ալ ան լեզուն սորված էր. եօթներորդը՝ Սպանիացի էր, և Սպանիարէն կը խօսէր. ութերորդը՝ Բրուսիոյ մէջ ծնած էր. և նոյն լեզուն կը խօսէր. տասնց բոլորն ալ արու զաւակ ըլլալուն՝ միայն Նէքոլինա անուամբ Էջիպտ կը զղջին ծնած աղջիկ մը ունէին։

Այս տղոցը անդրանիկը 28 և ամէնէն պզտիկն ալ 8 տարեկան էր. և մայրերնին ալ դժբաղդաբար մեռած ըլլալուն՝ այս ինը զաւակն ալ իրենց հայրերնուն խնամակալութեանը տակը մնած խաղաղութեամբ հոն կեանքերնին կ՚անցընէին. և թէ որ պատահմամբ մէկը տասնց տունը մտնալու ըլլար՝ ուրիշ բան մը չէր տեսնէր, բայց միայն Բաբիլոնեան աշտարակին լեզուաց խառնակութիւնը։

Հետաքրքրական գիտեցիքներ։

Ի՞նչ է երկրագործութիւնը։

Երկրագործութիւնը աւելի օգտակար ու կարեւոր աշխատութիւն մըն է, որ հողերուն բնութիւնը կը նորոգցունէ, և անոնց բնական յարմարութիւն ու կարգադրութիւնը, մարդկանց ու անասնոց կերակուր մատակարարելու համար։

Ի՞նչ է օդը։

Օդը աներեւոյթ ու թափանցող առաձգական կաղ մըն է, քանի մը մղոն բարձրութեամբ երկիրը պատած, կենաց ու բուսականաց տարերքները կը պարունակէ. ու փորձուած ալ է որ՝ օդը ութը հարիւր անգամ թեթեւ է ջուրէն։

Ի՞նչ է անդամալնութիւնը։

Անդամալնութիւնը արհեստ մըն է, որ մեռած մարդուն մարմնոյն անդամները ընելով ու քնելով կարգի դնել, անոնց ամէն մէկ մասերը, որն որ ախտերուն բնութիւնը կը յայտնէ՝ և բժշկականութեան ու վիրաբուժութեան արուեստը առաջ կը տանի։

Ի՞նչ է թուաբանութիւնը։

Թուաբանութիւնը թիւերով հաշուելու արհեստ մըն է. թէպէտ մեծ զանազանութիւններ կան անոր հնարքներուն մէջ, որն որ կը բաղկանայ միայն չորս որոշ գործողութիւններէ. այսինքն՝ Յաւելում. Հանում. Բազմապատկութիւն ու Բաժանում։

Զուարճաշի հարկինք եւ արտասուոց գիտուններ։

Մօտերս Պոլիս հարսնիքի մը մէջ պսակի տաւնը յանկարծակի վերան սենեակին մէջ կայնած տեղէն մէկ կողմի վրայ խնալով կը դասալըտրկի. եղբայրը վարի սենեակին մէջ գանուելով ան ալ հոն տեղ միւնոյն բոպէին մէջ գետինը կը գլորի. մամ բերող լուսարարն ալ ան տաւն պարտեզին մէջ գտնուելով անիկա ալ հոն մէկէն ի մէկ սահի կ՚ինայ ու հողին վրայ կը թաւալի. մի և նոյն բոպէին մէջ խոհարարն ալ օղիին շիշը բերնին մօտեցուցած տաւնը իսկ և իսկ նստած աթոռէն վար կը գլորի։

Այս տարօրինակ դէպքէն տան մէջ իրար անցում մը կը վրթի, և հոն եղող մէկ քանի արտասուոց գիտուններ կը վճռեն որ նոյն տունը Բէրիէ բուն թագաւորին պալատն ըլլալով թագաւորը իր մէն հրաման չառած հարսնիք ընելնուն բարկացեր է, և իբրև պատիժ նոյն գիշերը ան չորս հոգիին ամանկ ըրեր է, միւսներուն թողութիւն տալով։ Բայց ասոր ստոյգ պատճառը տես է որ՝ թէ Բէրիէրոն թագաւորը աս բանը ըրեր է, հարսի գինին ու օղիին չար ոգիները այնչափ սպառուած ըմպելիքներուն համար ոմս պահելուին ան գիշերը աս զարհուրելի ու միանգամայն արհամարհելի դէպքը գործեր են։

Բարոյական առած։

Յաջողութիւնը բարեկամներ ձեռք կը ձգէ, ու ձախորդութիւնը կը փորձէ զանոնք։